ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1127286
01-05-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Վայոց ձորի մարզպետարան*

Դիմող՝ *ԱՄ ՓԱՐԹՆԵՐՔ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ ՍՊԸ*
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, , ԿԵՆՏՐՈՆ,
ՎԵՐԻՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ Փ., 135, 3
emehrabyan@ampartners.am : 37441050136

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվում է «**Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» (ՏՏԵԶ) ծրագիրը**: Դա զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավման ամենախոշոր ընթացքի մեջ գտնվող ծրագիրն է (ավարտը՝ 2024թ. դեկտեմբերին), որի շրջանակներում իրականացվում է Հայաստանի 41 զբոսաշրջային վայրերի ենթակառուցվածքների կառուցման կամ բարելավման աշխատանքներ: **Վայոց ձորի մարզում ենթա-ծրագրեր են իրականացվել մասնավորապես Արենիում և Ջերմուկում:** Ծրագիրն իրականացվում է **Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից**:

Մեր ընկերությունը (AM Partners խորհրդատվական ընկերություն, www.ampartners.am) հանդիսանում է ՏՏԵԶ Ծրագրի մոնիտորինգի գործակալությունը: Բացի բուն մոնիտորինգի գործառույթներից՝ մենք ուսումնասիրում ենք նաև, թե ծրագրի տարածքներում քանի աշխատատեղ է ստեղծվել ՏՏԵԶ Ծրագրի իրականացման արդյունքում: Աշխատատեղերի գնահատման համար ընտրվել են հետևյալ տեսակի տնտեսվարող սուբյեկտները (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր)՝ հյուրանոց, հյուրատուն/B&B, այլ զբոսաշրջային կացարաններ (ճամբարային վայրեր և այլն), տուր օպերատորներ, գիդ-զբոսավարներ, զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակներ (DMO, ինֆո-կենտրոն), առողջարաններ, ձեռագործ իրեր պատրաստողներ, զբոսաշրջային տրանսպորտային ծառայություններ մատուցողներ, զբոսաշրջային ժամանցային գործունեություն իրականացնողներ:

Ուսումնասիրությունն առավել համապարփակ իրականացնելու և առավել իրական պատկեր ստանալու նպատակով, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն վերոնշյալ տեսակների գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասին՝ ըստ ներքևում ներկայացված ձևաչափի, որոնք գործունեություն են իրականացնում Արենի գյուղում և Ջերմուկ քաղաքում:

Տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների ձևաչափ.

Տնտեսվարող սուբյեկտի անունը, ներառյալ կազմակերպաիրավական ձևը (օրինակ՝ Xxx ՍՊԸ կամ Xxx Yyyյան ԱՁ)	**Տնտեսվարող սուբյեկտի գործունեության հասցեն** (Մարզ, բնակավայր, փողոց, շինության No)	**Կոնտակտային տվյալներ** (Առկայության դեպքում)

Հարգանքով՝

ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի ՍՊԸ

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԷԴԳԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ